



## ԶԵՆՈՆ ԿՈՍԻԴՐՈՎՍԿԻ

### ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՎԱՍԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

#### ՊՈՂՈՍԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄ ՂՈՒԿԱՍԸ

Երրորդ Ավետարանի հեղինակի մասին մեզ հասել են ավելի որոշակի տեղեկություններ, քան մյուս ավետարանիչների: Ամենայն հավանականությամբ նա Ս. Անտիոքի քաղաքացի էր, հողն, որը, ինչպես իր հայրենակիցներից շատերը, ընդունել էր քրիստոնեական հավատքը: Նրա անունը Ղուկոս էր, սակայն հավատակիցները նրան կոչում էին Ղուկաս:

Որոշ պատմաբնների կարծիքով նա ազգային արձակված ստրուկներից էր, որին Անտիոքի ունուր ընտանիքներից մեկը ազտություն էր շնորհել: Ինչպես վկայում է ավանդությունը, նա մասնագիտությամբ բժիշկ էր, սակայն միաժամանակ զրադվուն էր նկարչությամբ և բավականին լավ գիտեր իրավագիտություն:

\* Մուկվայում հրատարակվող «Գիտություն և կրոն» ուսուեն ամսագրի սովոր թվականի 8-9-րդ համարների էջերում տպագրվել է լեռ ճանաչված գրող, «Բիրլիանս ավանդապատումներ» գրքի մեջ՝ լինակ Զենոն Կոսիդրովսկու «Ավետարանիչների ավանդապատումները» աշխատությունից թարգմանաբար մի հոդված:

«Էջմիածն» ամսագրի խմբագրությունը իր ընթերցողների ուշադրությանը է հանձնում օշակած ամսագրի 9-րդ համարում տպագրված «Պողոսի հավատարիմ քարեկամ Ղուկասը» հոդվածը, ուստեղից նաևն թարգմանությամբ և մի փոքր կրօնականությունով:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամտիոքը այն ժամանակ պատկանում էր հունական մշակույթի և հելլենական կրոնական պաշտամունքների ամենանշանավոր կենտրոնների թվին: Այս հուկայական հարուստ քաղաքում էլ ստեղծվեց նոր կրոնի խոշորագույն համայնքներից մեկը, որը քրիստոնեության կազմավորման մեջ քիչ էր չխաղաց:

Ղուկասը, որը դաստիարակվել էր հունական մշակույթով, ընդունելով նոր հավատքը, իր ողջ կրթությամբ և եռանդով դպրուեց:

Հաճախ Անտիոք էր գալիս Պողոս առաքյալը: Ղուկասն անմիջապես կապվեց տարսունցի այդ աննշան տեսքով հրեային, որը զարմացնում և գերում էր իր կրքու ու համարձակ խելքով: Ղուկասը դարձավ նրա քարոզչական շատ ուղևորությունների մասնակիցը և եղր ձեռքը վերցրեց գրիչը, պարզվեց, թե որքան խորն էր նրա գաղափարական կախվածությունը Պողոսից: Այս կախվածությունն այնքան ցայտուն էր, որ եկեղեցական որոշ հեղինակներ (օրինակ՝ Իրենիոս Լիոնացի, Ղուկաս Ուկեբերան) երրորդ Ավետարանը համարեցին Պողոսի գործ: Ղուկասը գրեց նաև «Գործք առաքելոց»-ը՝ հիմնականում նվիրված Պողոսի գործունեությանն ու քրիստոնեական վաղ շրջանի պատմությանը: Աստվածաշնչի որոշ մասնագետներ կասկած հայտնեցին, թե՝ արդյո՞ք այդ Ավետարանի հեղինակը Ղուկաս է, քանի որ, մասնավորապես

Երանց կարծիքով, այն երեսն է եկել միայն երրորդ դարի սկզբին: Այս տեսակետը, սական, լայն տարածում չգտավ, և այս պատճենով էլ մենք այդ հարցով շենք զրադիք: Արդ, ինչպես թվագրենք երրորդ Ավետարան:

Երրորդ Ավետարանի ԽՍ գլխում հիշատակվում է Երուաղեմի կործանման մասին, ուստի այն 70 թվականից շուտ գրված չի կարող լինել: Այս դեպքում այդ հիշարժան աղետից որքան հետո: Մենք, որքան էլ տարօրինակ թվա, այս հարցին կարող ենք բավականից ճիշտ պատասխան տալ:

Տերսում կամ ակնարկություններ Դումետիանու կայսեր օրոք քրիստոնյաներին նախաձեռու մասին: Մյուս կողմից՝ երրորդ Ավետարանում աշքի է ընկանում Պողոս առաքալի թղթերի մասին որևէ հիշատակության պակասը, չնայած այն բանին, որ ներածության մեջ խոսվում է Հիսուսի կյանքին վերաբերվող սղբարությունների մասին:

Դումետիանու իշխան է 86—91 թվականներին, իսկ Պողոսի թղթերը երկար ժամանակ մոռագության էին մատուցել և ի հայտ եկան միայն 95 թվականին: Եզրակացությունը պարզ է. Երրորդ Ավետարանը երևան է եղել 95 թվականից մի քանի տարի առաջ, հավանաբար շուրջ 90 թվականին: Դումետիան այն ժամանակ, անկասկած, շատ ծեր էր:

Որպեսզի հասկանանք Դումետիան, պետք է խմանաք, թե ինչ նպատակ էր դրել նա իր առջև Ավետարանը գրելիս: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Հոումետական Կայության մեջ քրիստոնեական հավատքի դավանումը համարվում էր հանցագործություն, քանի որ քրիստոնեաները, չնայած նոումետական օրենքի պարտադրելուն, հրաժարվում էին աստվածային մեծարանքների արժանացնել կայսրերին: Սակայն քրիստոնեաների դեմ հավաճառքները, բացառությամբ Ներոնի արյունայի դաժանությունների, ավելի շուտ կրում էին անցողիկ քընոյթ և սաստկացան միայն Դումետիանուի իշխանության շրջանում: Քրիստոնեաներին արքորդում էին կայսրության հետավոր շրջանները, իսկ նրանց ունեցվածքը՝ բռնագրավում: Դումետիան իր վրա է վերցրել դրժարին մի խնդիր. փորձում է ապացուել, որ քրիստոնեաները պետության թշնամիներ չեն, և որպես ապացուց նա մասնավորաբար բերում է այն փաստը, որ Պիդասուն արդեն համոզվել էր այն բանում, որ Հիսուսի անմեղ և անվտանգ անձնավորություն է կայսրության համար:

Եթե Հիսուսի դերի գնահատման հարցում առաջ են եկել որոշ թյուրիմացություններ, ապա, Դումետի կարծիքով, դրանում մեջա-

վոր են նրան խաչելության դատապարտող հրեաները:

Այս ցատագովական գաղափարի համաձայն էլ Դումետի Ավետարանը նկարագրում է Հիսուսի կյանքը ու գործունեությունը:

Քրիստոնեությունը, նրա մեկնարանամար, հիմքնապարփակ հրեական մի աղանդ չէ, այն կրում է տիեզերական բնույթ:

Հիսուսը թիջէ և ուսուցիչ, որը այլում է ողջ մարդկության սիրով, թերևացնում նրա տառապանակները և տախի նրան սկզբնական մեղքից ազատվելու հնարավորությունը:

Որպեսզի ընկածի Հիսուսի անձնավորության տիեզերական բնույթը, Դումետի Քրիստոնի ծննդարանությունը կապում է ոչ թե Աքրանամի հետ, ինչպես այդ անում է Մատթեոսը, այլ մարդկության նախանոր Աղամի:

Երուաղեմի տաճարում նորածին Հիսուսին տեսնելով, Միմետն Շերունին ողջունում է նրան որպես «բողոք ժողովուրդների» պապա Փոլիշ (Բ 31): Հովհաննելու Մկրտիչն արդեն իսկ դատապարտում է հրեաների նեղմիտ անշատվողական ձգտությունը, իսկ Հիսուսը երկից շեշտում է, որ ներքը պետք է չարշարանքների կրի և հարություն առնի աշխարհի բոլոր ժողովուրդների բարօրության համար (ԺԳ 29, իդ 47):

Դումետի պատկերմամբ Հիսուսը դրժախտների և ընչագործների նկատմամբ ոչ երկրային գթառատությամբ լի մի կերպար է և միաժամանակ անհաջող բոլոր նրանց նկատմամբ, ովքեր, շնորհիվ իրենց հարստության, մեծամտաքար իրենց վեր էին դասում որիշներից: Բարի Սահմարցու, Անառակ որդու և Մելամիոր կնոջ առակները բազմաթիվ սերունդների ուսուցանում էին սեր, գթառատություն և հանդորդողություն մերձավորի նկատմամբ: Այլ առակներում, հատկապես՝ Մեծառան և Ղազարու, Հարուստ երիտասարդի և Այրի կնոջ լումայի, ինչպես նաև այնպիսի դրժագուեր, ինչպիսին է դրամափոխների վտարումը տաճարից, բնութագրում էին Հիսուսի որպես հավատարիմ բարեկամ ընչվածների և անողոր դատավոր՝ այս աշխարհի ուժեղների, մի խոսքով՝ որպես սոցիալական արդարության շատագով: Բայց և այնպես Դումետի վիճակը չի մոռանում իր Ավետարանի գիշավոր շատագովական նպատակը. նրա մեկնարանության մեջ Սասուծու հախասահմանված երկնային արքայությունը բազավորություն չէ տառացիունի, այլ մարդու հոգևոր վերածնունդ: Սահման ևս հերքում է այն մեղադրանքը, որ քրիստոնեաները իրեն թե ձգտում են տապալե-

լու կայսրությունը և հիմնելու իրենց աշխարհիկ իշխանությունը: Հիսուսը Ղուկասի Ավետարանի մեջ ասում է. «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խորանօք. և չափեն թէ ահաւասիկ աստ է կամ անդ, զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներք ի ձեզ է» (ԺԷ 20–21): «Տուր զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ» (Դ 25) խրատական ասացվածքում ըստ Ղուկասի Հիսուսը հայտնի կերպով շեշտում է Հոռմեական Կայսրության հանդեպ ունեցած իր օրինապահությունը:

Ղուկասի Ավետարանն ընթերցելիս նրա մեջ նկատու ենք երկու հիմնական ձգտումներ: Մի կողմից պատմության հիմուվածքի մեջ խորապես յափանցած բանավեճի սրումը, մյուս կողմից՝ Բեդինակի վերաբերմունքը Ակարագրվող դեպքերի նկատմամբ, վերաբերմունքը, որը աստվածային ուսուցչի հանդեպ լի է քնարականությամբ և անհուն սիրով: Նրա կողմից նկարագրվող կերպով գերում է իր բարությամբ և հեղությամբ: Հիսուսն ուսուցանում և ապաքինում է մարդկանց՝ նախ և առաջ դեկավարպեճով սիրով և գթառատությամբ նեաի մերձավորը:

Երրորդ Ավետարանն ամբողջությամբ համակված է քննչության, նրանեւակատության և հանդորժողականության ոգով, որը տարածվում է նաև կանաց և երեխաների վրա:

Հիսուսն ընդունում է կանաց հոգևոր կյանքով ապելու իրավունքը, իսկ երբ աշակերտներն արգելեցին երեխաներին մոտենալ Հիսուսին, նա արտասանեց հոգիչ ջերմությամբ լի հետևյալ նշանավոր խոսքը. «Թոյն տուր մանկուոյդ գալ առ իս, եւ մի արգելուք զրոսա, զի այդահետեացդ է արքայութիւն Աստուծոյ» (ԺԸ 16): Սա աղքատների և թշվառների Ավետարան է: Ու միաժամանակ այն նախազգուշացում է հարուստներին՝ Հիսուսի արտահայտությամբ. «Ենիրագոյն իցէ մալիսոյ ընդ ծակ ասան անցանել քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել» (ԺԸ 25):

Աստվածաշնչի մասնագետները Ղուկասի Ավետարանը սովորաբար համարում են Նոր Ուխտի ամենաբանաւուելինական և գեղարվեստական երկը: Այս միտքը շատ բաներում արդարացի է: Ծնորիիվ բանաստեղծի՝ բանաստեղծական արվեստի նկատմամբ ունեցած սիրո, մեզ են հասել վաղ քրիստոնեական շրջանի երգեր, որոնք չըկան մյուս Ավետարաններում, երգեր, որոնք արդար դարձել են Նոր Ուխտի զարդու:

Իր գրվածքում Ղուկասը ներտակ է Մարկոսի համարյա ողջ Ավետարանը. փոխառությունը կազմում է նրա Ավետարանի մո-

ւավորապես մեկ երրորդ մասը: Սակայն նա այդ ողջ նյութը մշակման է ներարկել, որը և ավելի պարզ է դարձրել նրա միտումը: Նախ և առաջ նա հարթեցրել է Մարկոսի խորին ոճը և Բեռուցրել այն ամենը, ինչն իր միամստույամբ և անհետունողականությամբ ավելի փորձված ընթերցողների մոտ կարող էր թերահավատություն առաջացնել: Ծշտեղով Մարկոսին, նա առավել չափով, քան Մարկոսը, մեղմացրել, իդեալականացրել և վեհացրել է Հիսուսի և Նրա աշակերտների կերպարները: Դա օգնեց նրան հասնելու իր գիւղավոր նպատակին. հումեացիների շրջանում բարեկամներ ձեռք բերել:

Ավետարանի շարադրանքից որոշակի երևում է, որ Ղուկասը քաշ ծանոթ էր հունական և հոոմեական գրականությանը: Նա զիտեր ժամանակի գրական կանոնները և համաձայն դրա էլ իր ստեղծագործությունը նախադրում է մի առաջարանով, որտեղ համարու կերպով պատմում է իր երկարիության աղբյուրների և նպատակների մասին: Բացի այդ, ըստ տվյալների, նա առաջարանին կցում է մի ձո՞ն՝ նվիրված «հարգարժան Թեոփիլոսին», որի մասին մենք, ի միջի այլոց, ոչինչ չգիտենք: Արդյո՞ք նա Ղուկասի հովանավորն է եղել, թե՝ նրա ընկերը:

Այս բոլորը, սակայն, գրական վարդապետության և բարոյագիտության մարզին վերաբերող արտաքին հատկանիշներ են: Մեզ համար առավել նշանակություն ունի այն, որ Ղուկասը խոսքի բարձր մշակվածությամբ և գրական վարդապետությամբ աչքի ընկնող հսկական գրող է: Նրա ոճը լի է չափի զգացողությամբ և արժանիքով, բառապաշտո՞ր՝ հարուստ, կառուցված նախադարյուններո՞ւ անխալ, շարադրյություններ՝ համաշափ և բնական: Բացի դրանցից, Ղուկասը տաղանդավոր պատմող է: Հիսուսի կյանքի դեպքերը լի են դրամատիկ լարվածությամբ, շարժուն են և ներդաշնակ: Ինքը Ղուկասն առաջին հերթին իրեն համարում է պատմարան: Լինելով ավետարանիներից միակը, նա փորձում է Հիսուսի կյանքը ժամանակագրական կարգով կապել Հոռմեական Կայսրության պատմության հետ և այս ձևով իր պատմությունը հիմնավորել ավելի փաստական տեղնկություններով:

Թեև, ինչպես մենք հետագայում կհամոզվենք, այդ թվագրության սուզությունը չափազանց կասկածելի է, սակայն չի կարելի ամբողջովին հերքել Ղուկասի կողմից այդ մարզում ունեցած որոշակի նվաճումները: Նա միակն է, որ Նոր Կտակարանին հիշատակում է հոոմեական կուսակալ

Կյուրենիոսի հրամանով Հրեատանում կատարված մարդաբանարի մասին և հոռմեական կայսրերին կոչում անուններով։ Որպեսզի գնահատենք նրա մեթոդը, բերենք հետևյալ օրինակը։ Երրորդ գլուխ սկսվում է հետևյալ արտահայտությամբ. «Ի հինգտոտասաներորդի ամի տէրութեան Տիրերեայ կայսեր, ի դատարութեան Հրեատանի Պիղատոսի Պոնտացոյ, և ի շորրորդակտութեան գալիլացոց Հեռովիդի, և ի Փիլիպոսի եղրօն նորա շորրորդակտութեան հոնորացոց և տրարունացոց աշխարհին, և ի շորրորդակտութեան Լիսանեայ՝ արիլենացոց, և ի քահանայապետութեան Աննայի և Կայիափազ եղև քան Ասոնույ ի վերայ Յովհաննու որդու Զաքարիայ յանապատի անոյ» (Գ. 1-2)։ Տիրերին կայսեր իշխանության 15-րդ տարին համընկնում է 29 թվական։ Պիղատոս Պոնտացին Հրեատանի կառավարից էր 26-36 թվականներին։ Աննան և Կայիափազ հերթականությամբ գրադեցնում էին քահանապատության պաշտոնը 6-ից մինչը 36 թվականնը։ Եվ մոտավորապես նոյն ժամանակաշրջանում էլ իշխել են նշված շորրորդակտութերը՝ Հեռովիդեալ, Փիլիպոսը և Լուսանիար։ Այսպիսով, տեսնում ենք, թե որքան օգտակար են այս տեղեկությունները Նոր Կուլպարանի ժամանակագրությունը կազմելու համար։

Մենք արդեն խոսել ենք այն մասին (նախորդ հոդվածներում—Ա. Վրդ. Ա.), որ Ավետարանները երկար ժամանակ անանուն են և հետագայում միայն նրանք վերագրվում են որոշակի հեղինակների։ Դա իմարեկ վերաբերվում է նաև Ղուկասին։ Սակայն տվյալ դեպքում այս բանը մեզ թըլվում է խորը։ Տէ՛ որ գիտենք, թե Ղուկասի Ավետարանը ստեղծվել է գրական դասական երկի օրինակով՝ նրա բոլոր կանոններով և օրենքներով հանդերձ։ Եվ դժվար է հավատալ, թե Ղուկասը կարող էր նկատի շատեւ այդ գրականության հիմնական սկզբունքներից մենքը, որի համաձայն՝ լուսանշյոր ստեղծագործության մեջ պետք է նշվեն վերևագիրը և հեղինակի անունը, կարևոր չէ՝ իրական, թե կեղծանունը։

Ուրեմն ինչո՞ւ մենք չենք կարող փաստ իմենք, որ Ավետարանի հեղինակը նոյն այդ հույն քժիշկ Ղուկասն է, իսկ անհնակարեւորը՝ Պողոսի ուղևորությունների մասնակիցը։ Աստվածաշնչի որոշ մասնագետներ առնում են, որ նման կասկածի հիմք է տալիս Ավետարանի բովանդակության վերլուծությունը։

Նախ և առաջ այդ վերլուծությունն ամրողությամբ հաստատեց այն կարծիքը, որ հեղինակը նոյն մի քժիշկ է։ Շարադրան-

քում հայտնի են թշվական տէրմինարանությանը համապատասխանող բազմաթիվ աշխախիս տէրմիններ, որոնցից օգտվել են հնագոյն ժամանակների աշխախիս թշվականություններին, ինչպիսիք են Հիպատուրատը, Դիունտիդիուր և Գալենիոսը։ Հեղինակը ծանոթ է նրանց ստեղծագործություններին ոչնչակեան, ինչպես ծանոթ կիմներ միմիայն մասնագետը։ Բացի այդ, առանց դժվարության կարելի է պարզել, որ Ավետարանը գրել է մի հոյն և այն հասցեագրել՝ ոչ իրեւ ընթերցողներին։ Անս այդ տեսակները հաստատող հիմնական փաստարկներից մենք ենք. այլ Ավետարանների մեջ օգտագործվում են իրեաներին միայն հասկանայի արամետրեն տէրմիններ։ Ղուկասն իրեւ հաշիվ էր տպիս այն բանում, որ դրանք պետք է փոխարինել հումարեն համապատասխան տէրմիններով՝ հասկանայի դարձելու համար ոչ իրեական ծագում ունեցող լութերություններին։

Ղուկասը, ինչպես այդ երկու է հախարանից, գիտեր և օգտագործել էր այն ժամանակներում տեղի ունեցած «դեպարտինգարագրությունը»։ Որպես պատմաբան, իմարկե, դրա իրավունքը ուներ, և դրանում ոչ մի վառ քան չկար, եթե այդ փոխառությունները հիմնական շարադրանքի լրացումները միայն լինեն։ Բանն այն է սակայն, որ մենք այդ Ավետարանը չենք կարող ընդունել որպես ինքնուրույն մի ստեղծագործություն։ Դա տիպիկ մի խթագործություն է, որի բաղադրամական ստացվել են համարյա բացառապես երկրորդական ձևորերից։ Մենք արդեն գիտենք, թե ինչպես է Ղուկասը հիմնավորապես օգտագործել Մարկոսի Ավետարանը։ Սակայն նա լայնորեն օգտվել է նաև այլ աղբյուրներից, որոնք ունեն երկրորդական հշանակություն։ Այդ աղբյուրներից մենք է «Էլոգոսները», այսինքն Հիսուսի ասույթները, որոնք բրիսոններկան համայնքներում տարածվել են նրա հավատարիմ հետևողությունների կամ էլ շրջիկ քարոզիչների միջոցով։ Այն մասին, թե որքան խնամքով է Ղուկասը դրանք հավաքել և կցել իր պատմությանը, վկայում է այն, որ, քան Աստվածաշնչի մասնագետների հաշվումների, դրանք գրադեցնում են նրա գրքի մեջ հինգգերորդ մասը։ Ղուկասը, վերջապես, իր Ավետարանում օգտագործել է Հիսուսի և Հովհաննես Մկրտչի հրաշագործ ծննդյան մասին եղող բանահյուսական ավանդությունները։

Եվ այսպես, օտար աղբյուրներից կատարված փոխառություններն այսուել պարզապես ակնհայտ են, և այդ իսկ պատճառով էլ նարը է ծագում, արդյո՞ք սույն Ավե-

տարանի հեղինակը նովն Պողոս առաջայի ուղեկից Ղոկասն է: Չէ՞ որ այդ Ղոկասը կարիք չուներ օտար տարբերակներից այդ աստիճան օգտվելու: Նա սերտ հարաբերություններ էր պահպանում Քրիստոսի կյանքի և գործունեության վկաների մեջ, որոնք կարող էին տեղեկությունների հաղորդել ճրան նախկին աղբյուրներից: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, թե

Ավետարանի հեղինակը նման ծանոթություններ չուներ և ստիպված բավարարվում է օտար տեղեկություններով:

Նոր, ավելի խոր բանափրական հետազոտությունները չլուծեցին այս երկմտությունը...

Ոռուերենից թարգմանեց՝  
ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱԶՅԱՆ

